Ավարտական հետազոտական աշխատանք

ԹԵՄԱ՝ ՏՀՏ գործիքների կիրառումը Հայոց եկեղեցու պատմության դասաժամերին

ԿԱՏԱՐՈՂ՝ ԱՐև ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԴՊՐՈՑ՝ ԵՐԵՎԱՆԻ ՍՏ. ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ թ. 1 Հ/Դ

ԱՌԱՐԿԱ՝ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝ «ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆԻ» ՀԿ

ԽՄԲԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝մանկավարժական գիտությունների թեկնածու,դոցենտ՝ ՍԻՄԱ ԴԱՅԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն

2. Հայոց եկեղեցու պատմություն առարկայի նպատակները:

3. Դասագործընթացում ՏՀՏ-ների կիրառման մեթոդիկայի արդյունավետությունը:

4. ՈՒսուցման բազմատեսակ մեթոդների նշանակությունը Հայոց եկեղեցու պատմության դասերին:

«Աշխարհը բարելավելու համար հարկավոր է շրջվել դեպի դրական կրթական մեթոդներ: Այն պահից, երբ բացահայտվեն առավել արդյունավետ մեթոդները, կրթությունը կդառնա գրեթե միակ համապատասխան բնագավառը, որը կարող է բարելավել կյանքը»

Բ.Ֆ. Սքիներ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դպրության հազարամյա պատմություն ունեցող Հայաստանում կրթությանը միշտ առանձնահատուկ նշանակություն է տրվել: Իր սկզբնավորման ժամանակներից հայ դպրոցը եղել է հայ ժողովրդի քաղաքական ու ազգային գոյատևման պատվարը: Հաշվի առնելով այն փաստը, որ դպրոցը գործել է վանքերում ու եկեղեցիներում, առանձնահատուկ տեղ է հատկացվել կրոնին, որը հանդիսանում է մեր ժողովրդի գոյատևման առհավատչյան: Դարեր շարունակ, հատկապես այն ժամանակներում, երբ Հայաստանը չի ունեցել թագավորություն, պետական գործառույթները իրականացրել է եկեղեցին, իսկ մեր դավանանքը հային պահել է հայ:

Վերջին մեկ-երկու տասնամյակների ընթացքում մեր իրականության մեջ ավելի ուժգին է դրսևորվում հանրության ուշադրությունը պատմական անցյալի և, մասնավորապես, ոչ վաղ անցյալում տեղի ունեցած բախտորոշ իրադարձությունների նկատմամբ: Ավելի սրությամբ է դրվում սթափ մտածելու, սթափ վերաբերմունք ունենալու անհրաժեշտությունը: Մենք պետք է հարգենք մեր պատմությունը, հաշվի առնենք անցյալի փորձը՝ այն գիտակցությամբ, որ մենք ենք մեր պատմության ժառանգորդը: Անցյալի մասին մեր օբյեկտիվ դատողությունը նպաստում է, որ պատմական փաստերը գնահատվեն պատմական ճշմարտության դիրքերից:

Հետևաբար, դպրոցները պետք է շատ –շատ բան անեն երիտասարդներին պատրաստելու համար ապրելու այնպիսի աշխարհում, որը ունի էթնիկ, մշակույթային, լեզվական, կրոնական բազմազանություն: Պետք է օգտագործել <<բազմատեսանկյուն մոտեցում>> աշակերտներին սովորեցնելու և անցյալի մասին պատմական տեսակետից մտածելու ունակությունը զարգացնելու համար, այսինքն՝ աշակերտները սովորեն, թե ինչպես պետք է վերլուծել, մեկնաբանել և համադրել պատմական փաստերը, որոնք առկա են սկզբնաղբյուրներում և գրականության մեջ:

Հայոց եկեղեցու պատմության դասերի ընթացքում նյութի յուրացմանը, թեմայի ավելի լավ հասկանալուն և գիտելիքների ամրապնդմանը նպաստում են տարբեր մեթոդների և հնարների կիրառումը: Դասերին կիրառվում են բազմազան մեթոդներ, ինչպես օրինակ՝

1. Դասախոսություն
2. Բացատրություն, վերլուծություն
3. Զրույց բանավեճ
4. Թեստային աշխատանք
5. Համակարգիչով դասի անցկացում
6. խմբայի աշխատանք
7. Դերային խաղ
8. Դասի կրկնություն
9. Էքսկուրսիաներ (եկեղեցիներ և վանքեր)

2. Դասագործընթացում ՏՀՏ-ների կիրառման մեթոդիկայի արդյունավետությունը

Կրթական բարեփոխումների ժամանակակից փուլում առավել ակտուալ է դարձել Հայոց եկեղեցու պատմության դասավանդման մեթոդիկայի մշտական կատարելագործումը: Քաղաքական այս բարդ ժամանակաշրջանում, երբ եկեղեցու պատմության դասժամերը գտնվում են լինել-չլինելու վտանգի առաջ, բնականաբար, պետք է փոխվեն նաև դպրոցում նրա մատուցման սկզբունքները, առարկայի ծրագրերը, դասագրքերը, դասավանդման մեթոդական մոտեցումներն ու լուծումները:

Դպրոցական Հայոց եկեղեցու պատմություն առարկայի առջև այսօր ծառացած է ոչ միայն զուտ գիտելիքների հաղորդում, այլև աշակերտների մեջ վերլուծական-շրջահայաց մտածողություն , հավատքի ամրապնդում ու պահպանում:

Հայ եկեղեցու պատմության դասագործընթացում ՏՀՏ-ների կիրառման մեթոդիկայի

արդյունավետությունը:

Դասագործընթացի արդիականացման և այն առավել արդյունավետ դարձնելու

գերակա պայման է համարվում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) ներդրումն ու դրանց գործնական կիրառումը հիմնական դպրոցում:

Հայ եկեղեցու պատմության դասին ՏՀՏ-ների միջոցով հնարավոր է դառնում ուսումնական նյութի ոչ միայն ավելի դյուրին և հետաքրքիր յուրացումը, այլ նաև

սովորողների ստեղծագործական մտքի խթանումն ու ստեղծարար կարողությունների ձևավորումը: Հայ եկեղեցու պատմության փաստերի մասին գիտելիքները ձևավորվում են տեղեկատվական տարբեր աղբյուրներից, ուստի և տեղեկության ստացումը ոչ միայն պարտադիր է, այլև հանդիսանում է ուսումնական ճանաչողական գործընթացի առաջնային փուլը, այստեղ մեծ տեղ է զբաղեցնում

առարկայական և պատկերավոր ընկալումը: ՏՆՏ-ների ներդրմամբ և դրանց կիրառմամբ Հայ եկեղեցու պատմության ուսուցման գործընթացում առանձնացրել ենք հետևյալ կթական համակարգչային ծրագրերը՝ ուսումնական,

ցուցադրական, վարժանքային, փաստական, տեղեկատվական, հանրագիտարանային; գրադարանային, վերահսկողական, մուլտիմեդիա:

Այսպես, նոր նյութի մատուցման և յուրացման գործընթացում նպատակահարմար ենք համարում համակարգչային ցուցադրական ծրագրերի կիրառումը, որոնց միջոցով առավել պատկերավոր և մատչելի ձևով են մատուցվում հիմնարար գիտելիքները: Նշված ծրագրային ապահովմամբ դասագործընթացում ուսուցիչը կարող է ներգրավել տարաբնույթ տեսահատվածներ և հոլովակներ, ուսումնական հաղորդումներ և վարժանքներ, ինչը կնպաստի յուրացվող տեսական գիտելիքների ամրապնդմանը: Մեր կարծիքով ՏՀՏ- ների նպատակային օգտագործումն Հայ եկեղեցու պատմության դասագործընթացում թույլ է տալիս նաև զգալիորեն կրճատել անհրաժեշտ տեղեկատվության կամ ուսումնական նյութի նախապատրաստական

ժամանակահատվածը: Արդի տեխնոլոգիական հնարավորությունների բազմազանությունից Հայ եկեղեցու պատմության առարկայի ուսուցման գործընթացում արդյունավետ և իրատեսական ենք համարում հետևյալ բնույթի համակարգչային ծրագրային և տեխնիկական միջոցների մեթոդական կիրառումը:

1. Ուսուցանող՝ նոր գիտելիքի ձևավորման մեթոդներ:

2. Նախավարժանքային՝ ստացված գիտելիքների ամրապնդում, հարցադրումների,

վարժությունների, առաջադրանքների միջոցով գիտելիքների յուրացվածության մակարդակի բացահայտման մեթոդ:

3. Զարգացնող՝ լրացուցիչ տեղեկատվության ներգրավմամբ, հարցերի, առաջադրանքների և վարժությունների համակարգի կիրառման մեթոդ, ուղղված սովորողի մտածելու և ստեղծագործական ընդունակությունների զարգացմանը:

4. Դաստիարակող՝ սովորողի հուզական ինտելեկտի ակտիվացում, որը նպաստում է անձի հասարակության մեջ կիրառելու իր ընդունակություններն և հաղորդակցական կարողությունները:

5. Վերահսկող՝ ընթացիկ, միջանկյալ և այլ ստուգումների իրականացման մեթոդ, որն ենթադրում է, խնդիրների լուծման նախանշված և փաստացի ուղու համադրում, ծախսված ժամանակի, թեստերի հարցերին ճիշտ և սխալ տրված պատասխանների

անմիջական ստացում:

6. Համախմբող կամ միավորող՝ դասասենյակում առկա բոլոր համակարգիչների ուսուցչի համակարգչի հետ ներցանցային կապի մեթոդ, որն ենթադրում է ուսուցչի կողմից աշակերտների կատարած աշխատանքների վերահսկումը հատկապես տեղեկատվական համակարգերում կողմորոշվելիս ՏՀՏ-ների կիրառման մարտավարությունը մշակելիս առաջարկում ենք հաշվի առնել հետևյալ

բաղադրիչները.

- գծային բաղադրիչ, երբ թեմայի յուրացման համար ընտրվում է որոշակի նյութ

- կառուցողական բաղադրիչ, երբ ընտրվում է թեմային առնչվող խոշորածավալ նյութ,

տարածական և երկայնական կապակցմամբ, վերլուծական բաղադրիչ, խնդիրների լուծման, խաղարկային, մրցույթային իրավիճակների ակտիվացման համար, երբ սովորողների համար ընձեռնվում է ինքնիրացման և ինքնադրսևորման հնարավորություն

- ստեղծագործական բաղադրիչ, երբ սովորողն արտահայտում է սեփական գաղափարներն ու դիրքորոշումները:

Աշխարհագրական գիտելիքների հաղորդման գործընթացում ՏՀՏ-ների կիրառման գլխավոր ազդակը պայմանավորված է սովորողի ինքնուրույնության, ակտիվության

և կոլեկտիվ համագործակցության դրսևորումներով, սակայն այդ 11 դրսևորումների ուղորդման գործընթացում, ուսուցիչը կարող է հանդիպել որոշ դժվարությունների, պայմանավորված իր և աշակերտների ՏՀՏ-ների կիրառման իմացական մակարդակից: Տարբեր է նաև սովորողների գիտական տեղեկացվածության, իմացության և ճանաչողության մակարդակը: ՏՀՏ-ների կիրառման պայմաններում աշակերտը սկսում է արժևորվել անհատական կամ թիմային աշխատանքի, կրթական դժվարությունների հաղթահարման սեփական ընդունակություններն ու

կարողությունները:

Հիմնական դպրոցում Հայ եկեղեցու պատմության առարկայի դասընթացը սովորողներից պահանջում է իմացական ոլորտի հետևողական զարգացում, որոշակի

մակարդակի ապահովում և պահպանում: Այս հանգամանքով է պայմանավորված գիտելիքների հետագա յուրացումը: Ուստի ուսումնական նյութի հաջող յուրացման համար անփոխարինելի են իմացական ընկալման հարթակի վրա կառուցված տեխնոլոգիական մոտեցումները: Արդի կրթական գործընթացը չի կարող բավարարվել միայն երևույթի մասին ներկայացված տեղեկությունների պարզ

մտապահմամբ, անհրաժեշտ են նաև պատճառահետևանքային կապերի առանձնահատկությունների վերլուծման ընդունակության զարգացումը: Այսօր արդեն կարելի է ասել, որ ՏՀՏ-ի օգնությամբ իրականացվող դասագործընթացները

սովորողների մոտ ձևավորում են վերլուծման, համակարգման, ընդհանրացման ու դասակարգման ունակություններ, նպաստելով նրանց դատողությունների և եզրահանգումների հիմնավորմանը:

Մեր կարծիքով՝ Հայ եկեղեցու պատմության դասավանդման գործընթացում ՏՀՏ-ների

կիրառման մեթոդիկան առանձնանում է նորարարական փոխներգործուն և ավանդական պահպանողական եղանակների համադրմամբ: Օրինաչափ է, երբ ՏՀՏ-

ների կիրառումն դասագործընթացում մեծապես նպաստում է դպրոցականների տեսողական և լսողական զգայարանների ինտենսիվ աշխատանքին, զարգացնելով նրանց տեսողական և լսողական հիշողությունը:

ՏՀՏ–ների կիրառմանը զուգահեռ, ցանկալի է օգտագործել նաև ուրվագծային քարտեզներ, խաչբառեր, գործնական պարապմունքները անցկացնելիս ամպայման կիրառել դիտազննական պարագաներ, պաստառներ, տեսաֆիլմեր, համապատասխան գրականություն:

Սովորողների, ՏՀՏ-ների և դիդակտիկական ավանդական միջոցների փոխներգործունության մակարդակի գնահատումը տալիս է ոչ միայն գիտելիքի

ըմբռնման, այլև խորության, և հիմնարարության չափանիշերը: Ելնելով հետազոտության հիմնախնդրի տրամաբանությունից, մեթոդական գրականության

ուսումնասիրություններից և մեր կողմից կատարված դասափորձերից, վերլուծություններից կարող ենք նշել, որ սովորողների և ՏՀՏ ռեսուրսների

փոխներգործունության մակարդակը դասագործընթացում ունի դրսևորման

մի քանի ձևեր, որոնցից յուրաքանչյուրը կարող է արդյունավետ կիրառվել միայն

որոշակի մակարդակում:

ա/ Զրոյական մակարդակ, երբ էլեկտրոնային կրթական ռեսուրսը միայն տեղեկատվության աղբյուր է, այն հիմնականում օգտագործվում է ուսուցչի կողմից դասին նախապատրաստվելիս և դիդակտիկ նյութեր պատրաստելիս: Փոխնեգործունեության հնարավորությունները չեն իրացվում կրթության գործընթացում և չեն պայմանավորում նրա արդյունքը:

բ/ Տարրական կամ նախնական մակարդակ, երբ էլեկտրոնային կրթական ռեսուրսը

օգտագործվում է միայն ուսուցչի կողմից դասարանում ցուցադրություն կազմակերպելիս, իրացնելով ռեսուրսի փաստարկման գործառույթը:

գ/Փոխներգործման մեկնարկային մակարդակ, երբ սովորողների և էլեկտրոնային կրթական ռեսուրսի հարաբերությունները կարգավորվում են ուսուցչի կողմից, ուսուցման անհատական, խմբային և ճակատային եղանակով, իրացնելով ռեսուրսի փաստարկող, տեղեկատվական, ամրապնդող և ստուգող գործառույթները:

Փոխներգործման միջին մակարդակ, երբ էլեկտրոնային կրթական ռեսուրսի հետ սովորողները հարաբերվում են դասի ժամանակ և դասից դուրս, ուսուցչի կողմից սովորողների ղեկավարումը կրում է միջնորդավորված բնույթ և արտահայտվում է մեթոդական հանձնարարականներով ու ցուցումներով: Այս պարագայում սովորողների կրթական գործառույթը իրականացվում է խմբերով, ընդ որում ամեն մի խումբ կատարում է որոշակի առաջադրանք իր պատրաստվածության մակարդակին համապատասխան:

Այս համատեքստում էլեկտրոնային կրթական ռեսուրսների միջոցով իրացվում է գիտելիքի ամրապնդման, ընդհանրացման և համակարգման գործառույթը: - Փոխներգործման առավելագույն կամ կատարյալ մակարդակ,երբ ուսուցչին զուգահեռ խնդիրներ կարող են առաջադրել նաև սովորողները, կրթական գործընթացի լիարժեք տեխնոլոգիական, մեթոդական և թվայնացման պայմաններում, էլեկտրոնային կրթական ռեսուրսների տարածական, դիդակտիկական անսահմանափակ հնարավորությունների օգտագործմամբ:

Նման մակարդակում դասագործընթացի ակտիվ սուբյեկտ է հանդիսանում աշակերտը, քանզի ուսուցչի ակտիվությունը նվազում է սովորողների կրթական և տեխնոլոգիական մակարդակի աճին համընթաց: Այս պարագայում էլեկտրոնային կրթական ռեսուրսի միջոցով, իրացվում է որոնողական, տեղեկատվական,

հետազոտական, փորձարարական, ստուգողական ու քննական գործառույթներ: Հայ եկեղեցու պատմության դասագործընթացում ՏՀՏ-ների կիրառման մեթոդիկայի արդյունավետությունն ապահովելու նպատակով, ուսուցիչն էլեկտրոնային դասագրքին անդրադառնում է այն ժամանակ, երբ սովորեցնում է հետևություններ անել: Հատկապես էլեկտրոնային դասագրքերից օգտվելու պարագայում հնարավոր է

դառնում նաև աշակերտների կողմից նոր նյութի ինքնուրույն ուսուցումը: Այդ դեպքում ռաուցիչը ներկայացնում է պլանը և հակիրճ նկարագրում այն գլխավոր

դրույթները, որ աշակերտները պետք է համացանցում որոնեն և գտնեն, թե դասի ժամանակ, և թե տնային աշխատանքի ձևով: Ուսուցման ցանկացած մեթոդ ենթադրում է նպատակ և գործողությունների համակարգ, դրան հասնելու ուսումնական միջոցներ, ծրագրավորված արդյունք:

Ներկա փուլում դպրոցին անհրաժեշտ են ճանաչողական ակտիվությունն ու ստեղծագործական կարողությունները, ինչպես նաև տեսական մտածողությունը

զարգացնողը մեթոդներ և մոտեցումներ: Հայ եկեղեցու պատմության ուսուցչի խնդիրն է դասավանդելիս առաջնորդվել ՏՀՏ-ների կիրառման հստակ մեթոդաբանությամբ:

ՆՊԱՏԱԿԸ

Հայոց եկեղեցու պատմության դասերին կիրառվում են բազմազան մեթոդներ, որոնց նպատակն է խթանել ուսուցման գործընթացը:

Ո՞ր դեպքում է մեթոդը համարվում համապատասխան և արդյունավետ:

Այն դեպքում, երբ այն առնչվում է սովորողի առանձնահատկությունների և ուսուցանվող նյութի հետ: Ուսուցչի հիմնական դերը կայանում է նրանում,

որ իր գիտելիքները փոխանցի աշակերտներին, մատուցվող նյութը դարձնի հետաքրքիր, հասանելի:

Սակայն ի՞նչ մեթոդներ էլ կիրառվի, կարևորը ուսուցչի խոսքն է, շեշտադրությունը,

ներկայացման ձև

1. Ուսուցանող՝ նոր գիտելիքի ձևավորման մեթոդներ:

2. Նախավարժանքային՝ ստացված գիտելիքների ամրապնդում, հարցադրումների,

վարժությունների, առաջադրանքների միջոցով գիտելիքների յուրացվածության մակարդակի բացահայտման մեթոդ:

3. Զարգացնող՝ լրացուցիչ տեղեկատվության ներգրավմամբ, հարցերի, առաջադրանքների և վարժությունների համակարգի կիրառման մեթոդ, ուղղված

սովորողի մտածելու և ստեղծագործական ընդունակությունների զարգացմանը:

4. Դաստիարակող՝ սովորողի հուզական ինտելեկտի ակտիվացում, որը նպաստում է անձի հասարակության մեջ կիրառելու իր ընդունակություններն և հաղորդակցական

կարողությունները:

5. Վերահսկող՝ ընթացիկ, միջանկյալ և այլ ստուգումների իրականացման մեթոդ, որն ենթադրում է, խնդիրների լուծման նախանշված և փաստացի ուղու համադրում, ծախսված ժամանակի, թեստերի հարցերին ճիշտ և սխալ տրված պատասխանների անմիջական ստացում:

6. Համախմբող կամ միավորող՝ դասասենյակում առկա բոլոր համակարգիչների ուսուցչի համակարգչի հետ ներցանցային կապի մեթոդ, որն ենթադրում է ուսուցչի կողմից աշակերտների կատարած աշխատանքների վերահսկումը հատկապես տեղեկատվական համակարգերում:

ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

1. Գնահատման ձևեր՝ ռեֆերատ և ստուգողական գրավոր

2. Գնահատման ընթացակարգեր՝ ընթացիկ երկու ստուգումների արդյունքների միջինացում

4. Գնահատման գործիքներ՝ յուրաքանչյուր ստուգման համար 10 միավորանոց սանդղակ և գիտելիքների, ակտիվության, ինքնուրույն աշխատանքների մակարդակ,

հաճախումների բաղադրիչներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ասատրյան Մ.Ա., Ուսանողակենտրոն կրթության նախադրյալները բուհում, Խ.Աբովյանի անվան իրականացման սոցիալմանկավարժական ՀՊՄՀ-ի 90- ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու, Եր., «Մանկավարժ» , 2013 թ.:

2. Ղուկասյան Ա.Ա., Ասատրյան Լ.Թ., Կարապետյան Ա., Մանկավարժական բուհի կառավարման տեխնոլոգիան և զարգացման միտումները, գիտամեթոդական ձեռնարկ, Եր., 2005, 274 էջ: